ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/29

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Էդ. Սաղաթելյանի, Ա. Նիգարյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 13.05.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա»

հիմնադրամի «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

- առ 08.05.2019թ.-ի N 5 արձանագրության 1-ին կետի 2-րդ մասով, այն է՝ «5-րդ չափաբաժնի մասով «Տիգրան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 2-րդ փուլով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին...» կայացրած որոշումը համարել անվավեր, իսկ «Տիգրան Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

- առ 10.05.2019թ.-ի N 6 արձանագրության 2-րդ կետի մասով, այն է՝ «Տիգրան Գրուպ» ՍՊ ընկերության սահմանված կարգով և ժամկետներում կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ (2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով) » կայացրած որոշումը համարել անվավեր:

Բողոքներ քննող անձի 14.05.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 17.05.2019թ. և 27.05.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 27.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.06.2019թ.-ին:

2. <u>«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույնով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պաշտոնապես ներկայացնում է բողոք «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի «ՀԳՊԱ-Գ2ԱՊՁԲ-19/04» ծածկագրով գևանշման հարցման անցկացման ընթացքում գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և ՀՀ գնումների մասին գործող օրենսդրության կոպիտ խախտումների դեմ:

Ս.թ. ապրիլի 15-ին «Ֆիրմա Այֆա» ՄՊԸ-ն ARMEPS համակարգի միջոցով info@armeps.am պաշտոնական էլեկտրոնայիև փոստի հասցեից ստացել է «Հայաստանի գեղարվեստի պետական ակաղեմիա» հիմնադրամի կողմից «ՀԳՊԱ-Գ2ԱՊՁԲ-19/04» ծածկագրով վեկտրոնային ձևով անցկացվող գևանշման հարցման հրավերն, որի 2-րդ և 5-րդ չափաբաժիններով նախատեսվում եր Պատվիրատուի կարիքների համար ձեռք բերել պրոյեկտոր և էկրաններ պատերին ամրացնելու կախիչ համապատասխանաբար:

Ընկերությունը հրավերով նախատեսված ժամկետում և կարգով ARMEPS համակարգի միջոցով ներկայացրել է իր հայտը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով:

Ս.թ. ապրիլի 26-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղար Փառանձեմ Խաչատրյանից gnumneryafa@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից ընթացակարգի մնացած բոլոր մասնակիցների հետ մեկտեղ ստացել է էլեկտրոնային նամակ, որտեղ Փ. Խաչատրյանը տեղեկացրել է

«Հարգելի գործընկեր. Հնարավոր չլինելով armeps-ի ոչ ավտոմատ ծանուցումներ բաժնով ուղարկել Ձեզ այս արձանագրությունը, ուղարկում եմ էլ. փոստով...» և երան կից ուղարկել է գնանշման հարցման բացման նիստի Արձանագրություն N 2 առ 25.04.2019թ., որի վերջին կետով գնահատող հանձնաժողովը պահանջել է ընթացակարգի բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից «3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում» ներկայացնել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշումով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի VII-րդ մասի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշումով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի VII-րդ մասի 32-րդ կետի 4-րդ ենթակետի և Հրավերի 7.8 կետի պահանջներով դեռևս ս.թ. ապրիլի 25-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստով դիմել էր գնահատող հանձնաժողովին, խնդրելով հասանելի լինելուն պես, տրամադրել ընթացակարգի 1-ին, 2-րդ ն 5-րդ չափաբաժիններով առաջին տեզը գբաղեցրած մասնակիցների կողմից հրավերի պահանջներին համապատասխան, ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը (անվանումը, ապրանքային նշանը, արտագրողի անվանումը, ծագման երկիրը ն տեխնիկական բնութագրերը) պարունակող փաստաթղթերի Հրավերի N 6 և N 6.1 հավելվածների սկանավորված պատճենները:

Չափաբաժին № 2

Ս.թ. մայիսի 06-ին gnumneryafa@gmail.com էլեկտրոնային փոստից մասնակիցներին է ուղարկվել «ՀԳՊԱ-Գ2ԱՊՁԸ-19/04» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումն որով 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած է ճանաչվել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն:

Ս.թ. մայիսի 07-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղար Փ. Խաչատրյանից gnumneryafa@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է 2-րդ

չափաբաժնով առաջին տեղը գբաղեցարած մասնակից ճանաչված «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողովին ներկայացված Հրավերի N 6.1 հավելվածի պատճենը:

Նույն օրը ս.թ. մայիսի 07-ին, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ուսումնասիրելով ստացված փաստաթուղթը, էլեկտրոնային փոստի միջոցով որպես արտադրողի NEC Display Solutions ընկերության միակ լիազորված դիստրիբյուտոր և սերվիս կենտրոն Հայաստանում տեղեկացրել է «ՀԳՊԱ-Գ2ԱՊՁԲ-19/04» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ը կողմից փաստաթղթերն չեն համապատասխանում Հրավերի պահանջներին, քանզի

Մասնակցի կողմից ներկայացված չափաբաժնի համարը սխալ է և չի համապատասխանում իրականությանը.

Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը սխալ է և չի համապատասխանում իրականությանը.

Մասնակցի կողմից ներկայացված, առաջարկվող ապրանքի ծագման երկիրը սխալ է և չի համապատասխանում իրականությանը.

Մասնակցի կողմից ներկայացված Հրավերի N 6.1 հավելվածը ներկայացնում է իրենից Հրավերի պայմանագրի Հավելված № 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի համապատասխան չափաբաժնի տեխնիկական բնութագրերի ուղղակի տառ առ տառ արտատպում:

Այս փաստաթղթում իսպառ բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ապրանքի լրիվ անվանումը, ներառյալ առաջարկվող կոնկրետ մոդելի անվանումը:

Տվյալ հանգամանքը գնահատող հանձնաժողովին պարզապես զրկում է հնարավորությունից համեմատել և ստուգել առաջարկվող ապրանքի իսկությունը, հրավերում ամրագրված ապրանքների տեխնիկական բնութագրերի հետ:

Էլնելով վերը շարադրվածից գտնում ենք, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում «ՀԳՊԱ-Գ2ԱՊՁԲ-19/04» ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 47-րդ կետի հիման վրա ենթակա է շտկման մեկ աշխատանքային օրվա ընթացքում»:

Ս.թ. մայիսի 08-ին gnumneryafa@gmail.com էլեկտրոնային փոստից մասնակիցներին է ուղարկել «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումն, որով «... 2-րդ չափաբաժնի մասով «Տիգման Գրուպ» ՍՊ ընկերության կողմից

ներկայացված 2-րդ փուլով պահանջվող փաստաթղթերը չեն համապատասխանում են «ՀԴՊԱ-Գ2ԱՊՁԲ-19/04» հրավերով սահմանված պահանջներին /մասնակցի կողմից ներկայացված չափարաժեի համարը սխալ է/»:

Նշված Արձանագրություն № 5-ում գնահատող հանձնաժողովը լիովին անտեսելով արտադրողի NEC Display Solutions ընկերության 2014 թ.-ից Հայաստանում միակ լիազորված դիստրիբյուտոր և սերվիս կենտրոն «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից պաշտոնապես ներկայացված մնացած 2 փաստերը վերին աստիճան գարմանալիորեն անդրադարձել է միայն մասնակցի կողմից թույլ տված զուտ տեխանիկական սխալին՝ չափարաժնի սխալ համարին:

Ս.թ. մայիսի 08-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժույովի քարտուղար Փ. Խաչատրյանից gnumneryafa@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է 2-րդ չափաբաժնով առաջին տեղը զրաղեցարած մասնակից ճանաչված «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ր կողմից հանձնաժողովին ներկայացված Հրավերի N 6.1 շտկած հավելվածի պատճենը:

Նույն օրը ս.թ. մայիսի 08-ին, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ուսումնասիրելով ասացված արդեն իսկ շտկած փաստաթուղթը, էլեկտրոնային փոստի միջոցով կրկին հատուկ շեշտելով որ գործում է որպես արտադրողի NEC Display Solutions ընկերության Հայաստանում միակ լիազորված դիստրիբյուտոր և սերվիս կենտրոն տեղեկացրել է «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից շտկած փաստաթղթերը կրկին չեն համապատասխանում Հրավերի պահանջներին, քանզի

ա) Ներկա դրությամբ NEC թվային պրոյեկտորների շարքում առկա է ընդամենը 1 (մեկ) մոդել, որն համապատասխանում է հրավերով պահանջված բնութագրերին (DLP տեխնոլոգիա; Full 3D DLP®- Link™support; Կետայնությունը՝ իսկական Full HD (1,920 x 1,080pixels) / արհեստական WUXGA (1,920 x 1,200 pixels); Պայծառությունը 4,000 ANSI Lumens; Լամպի շահագործման ժամկետը 3,500/8,000 ժամ և այլն):

Դա NECNP-M403H թվային պրոյեկտորն է հղում դեպի արտադրողի եվրոպական պաշտոնական կայք https://www.ncc-displaysolutions.com/p/cerne/en/products/choice.xhtml/-catReamcr&mg=DESKTOPPROJECTORS: Սարքավորումն ստկա է «Ֆիրւհս Ալֆա» ՍՊԸ-ի երևանյան պահեստում:

բ) Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը՝ NEC սխալ է և չի համապատասխանում իրականությանը:

Ապրանքի արտադրողի իսկական անվանումն է NEC Display Solutions, Ltd: Որպես փաստի հաստատում կից ներկայացնում ենք NEC NP-M403H պրոյեկտորի իրանի վրա կպցրած գործարանային պիտակի լուսանկարը:

գ) Մասնակցի կողմից ներկայացված, առաջարկվող ապրանքի ծագման երկիրը ճապոնիա սխալ են չի համապատասխանում իրականությանը:

Ապրանքի ծագման երկրի իսկական անվանումն է Թայլանդ (Thailand): Որպես փաստի հաստատում կից ներկայացնում ենք NEC NP-M403H պրոյեկտորի իրանի վրա կպցրած գործարանային պիտակի նշված լուսանկարը:

դ) Մասնակցի կողմից ներկայացված Հրավերի N 6.1 շտկած հավելվածը կրկին ներկայացնում է իրենից Հրավերի պայմանագրի հավելված №1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի համապատասխան չափարաժնի տեխնիկական բնութագրերի ուղղակի տառ առ տառ արտատպում:

Այս փաստաթղթում իսպառ բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ապրանքի լրիվ անվանումը, ներառյալ առաջարկվող կոնկրետ մոդելի անվանումը:

Տվյալ հանգամանքը գնահատող հանձնաժողովին պարզապես զրկում է հնարավորությունից համեմատել և ստուգել առաջարկվող ապրանքի իսկությունը, հրավերում ամրագրված ապրանքների տեխնիկական բնութագրերի հետ:

Ելնելով վերը շարադրվածից գտնում ենք, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի հայտը համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի միանշանակ ենթակա է մերժման»:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն առ 08.05.2019թ. էլեկտրոնային նամակի ե պրոյեկտորի իրանի վրա կպցրած գործարանային պիտակի լուսանկարի պատճենները 4 (չորս) թերթ կցված են սույն բողոքին:

Սակայն ս.թ. մայիսի 10-ին gnumneryafa@gmail.com էլեկտրոնային փոստից մասնակիցներին է ուղարկել «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԳ-19/04» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումն (Արձանագրություն №6 առ 10.05.2019թ.), որի 2-րդ կետով սահմանվել է 5 օրացուցային օր անգործության ժամկետ, որից հետո ընթացակարգի բոլոր առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հետ մեկտեղ «Տիգման Դրաֆ» ՍՊ ընկերության սահմանված կարգով ե ժամկետներում կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ (2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով»: Նշված էլեկտրոնային նամակի և ընթացակարգի առ 10.05.2019թ Արձանագրություն №6-ի պատճենները ընդամենը 3 (երեք) թերթ կցված են սույն բողոքին:

Մինչդեռ, ինչպես նշվել է, վերոգրյալ տվյալներն և ապացույցները պաշտոնապես ներկայացված են արտադրողի իրավազոր գործընկեր կազմակերպության կողմից և

հասանելի են on-line արտադրողի պաշտոնական ինտերնետային կայքերում, իսկ այդ տվյալները հերքող որևէ տեղեկություն ձեռք չի բերվել:

Այսինքն, գնահատող հանձնաժողովը պարզապես իրեն ներկայացված փաստերի վերաբերյալ պատշաճ քննություն չի կատարել, ապացույցները պատշաճ չի գնահատել և եկել է սխալ եզրահանգման:

Հույս ենք հայտնում, որ ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդը սույն բողոքի քննարկման ընթացքում կպարզի, թե արդյոք ինչ է իրականում հանդիսացել գնահատող հանձնաժողովի այսպիսի գործելակերպի իսկական պատճառն, այն դեպքում երբ ճշմարտության բացահայտումը բխում է հենց Պատվիրատուի շահերից:

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից, գտնում ենք, որ Պատվիրատուն ուղղակիորեն և կոպիտ խախտել է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի (հայտերի գնահատումը) 1-ին մասի դրույթները, այն է «...Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են...»: 5-րդ մասի 2-րդ կետի դրույթները, այն 1. «...հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը: 6-րդ մասը, այն է «...հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները...»:

Ուստի, պաշտոնապես ներկայացնում ենք պահանջ ««Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի «ՀԳՊԱ-ԳՀՍՊՁԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առ 10.05.2019թ. N 6 արձանագրության 2-րդ կետի մասով, այն է «Տիգման Գրուպ» ՍՊ ընկերության սահմանված կարգով և ժամկետներում կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ (2-րդ ե 5-րդ չափաբաժինների մասով)» կայացրած որոշումը համարել անվավեր:

Չափաբաժին N° 5

Ս.թ. մայիսի 03-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղար Փ. Խաչատրյանից gnumneryafa@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է 5-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցարած մասնակից ճանաչված «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողովին ներկայացված հրավերի N 6.1 հավելվածի պատճենը:

Նույն օրը ս.թ. մայիսի 03-ին, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ուսումնասիրելով ստացված փաստաթուղթը, էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել է «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ը կողմից փաստաթղթերն ներկայացվել են օրենսդրությամբ սահմանված ժամկետների խախտմամբ և չեն համապատասխանում ՀՀ գնումների մասին գործող օրենսդրության և Հրավերի պահանջներին, քանզի «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն, որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից ընթացակարգի մնացած բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հետ մեկտեղ ելեկտրոնային փոստի միջոցով, ծանուցվել է հանձնաժողովի քարտուղարի կողմից հայտերի բացման նիստի ավարտից հետո (տեղի է ունեցել 25.04.2019թ. ժամը 11.00-ին արձանագրություն N 2 առ 25.04.2019թ.) հաջորդող աշխատանքային օրը, այսինքն 26.04.2019թ., և համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պարտավոր էր Հրավերի N 6 ե N 6.1 հավելվածները ներկայացնել ծանուցումը ստանալու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

Մինչդեռ համաձայն «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հրավերի N 6.1 հավելվածի, վերջինս էլեկտրոնային ձևով ստորագրվել է միայն 02.05.2019թ.. ժամը 21:27, այսինքն անգամ 4-րդ աշխատանքային օրվա ավարտից հետո, ինչ հանդիսանում է ՀՀ գնումների մասին գործող օրենսդրության կոպիտ խախտում:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ կողմից Հրավերի N 6.1 հավելվածով ներկայացված առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը սխալ է նշվել և չի համապատասխանում իրականությանը:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ կողմից ներկայացված Հրավերի N 6.1 հավելվածը իրենից ներկայացնում է ընդամենը Հրավերի №1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի համապատասխան չափաբաժնի տեխնիկական բնութագրերի ուղղակի տառ առ տառ արտատպում:

Բացի այդ, նշվել է, որ փաստաթղթում իսպառ բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ապրանքի լրիվ անվանումը, ներառյալ առաջարկվող կոնկրետ մոդելի անվանումը: Տվյալ հանգամանքը գնահատող հանձնաժողովին պարզապես զրկում է առաջարկվող ապրանքի իսկությունը հրավերում ամրագրված ապարանքների տեխնիկական բնութագրերի հետ համեմատելու և ստուգելու հնարավորությունից:

Ի պատասխան այս նամակի Պատվիրատուի նեկայացուցիչը հեռախոսազրույցում մեզ հայտնեց, որ գնահատող հանձնաժողովի կարծիքով «Տիգման Գրուպ» ՍՊԸ կողմից Հրավերի N 6.1 հավելվածը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետներում:

Ի լրումն վերը նշվածի, «Ֆիրմա Այֆա» ՍՊԸ-ն ս.թ. մայիսի 06-ին ևս մեկ անգամ էլեկտրոնային փոստով դիմեց ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, լրացուցիչ բևեռելով վերջինիս ուշադրությունը ՀՀ գնումների մասին գործող օրենսդրության ստորև բերված դրույթներին, այն է Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի, հանձնաժողովի քարտուղարը «Հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ \...էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից զյաությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը...»/:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կայգի 32-ող կետի 12-րդ ենթակետով սահմանվում է, որ « էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությանևեյուն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները...»:

ՀՀ ֆինանսների նախարարի 17.05.2017թ. N 219-Ս հրամանով հաստատված «էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման» ուղեցույցի III մասի «Մասնակցի կողմից գնումների էլեկտրոնային համակարգի /ARMEPS/ միջոցով բաց, բաց (հրատապ) գնաեշմամ հարցում և մեկ անձից գնումների կատարման» ուղեցույցի 4-րդ կետի համաձայն « ... մասնակիցը պետք է հետևի իր էլեկտրոնային փոստին. բանի որ հնարավոր է պարբերարար ստանա ծանուցումներ ընթացակարգի վերաբերյալ...», իսկ նույն ուղեցույցի

5-րդ կետի համաձայն «...պատվիրատուի կողմից փաստաթղթերի պահանջի դեպքում, մասնակիցը պարտավոր է սահմանված ժամկետում ներկայացնել պատվիրատուին պահանջվող փաստաթղթերը...:

Գնահատող հանձնաժողովի հատուկ ուշադրությունն բևեռվել է նաև այն փաստին, որ այլ տարբեակ ՀՀ գնումների մասին գործուղ օրենսդրությամբ պարզապես նախատեսված չէ:

Սակայն գնահատող հանձնաժողովը անբացատրելի պատճառով անտեսելով վերը նշված տեղեկությունները, ս.թ. մայիսի 08-ին gnumneryafa@gmail.com էլեկտրոնային փոստից մասնակիցներին է ուղարկել «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումն (Արձանագրություն №5 առ 08.05.2019թ.), որով «...5-րդ չափաբաժնի մասով «Տիգման Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված 2-րդ փուլով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» հրավերով սահմանված պահանջներին...»:

Այսինքն, գնահատող հանձնաժողովը պարզապես իրեն ներկայացված փաստերի վերաբերյալ պատշաճ քննություն չի կատարել, ապացույցները պատշաճ չի գնահատել և եկել է սխալ եզրահանգման:

Մինչդեռ, այն դեպքում, երբ ճշմարտության բացահայտումը բխում է հենց Պատվիրատուի շահերից, նույնիսկ շատ մակերեսորեն ուսումնասիրելով Onkron ապրանքանիշի արտադրողի թեկուզ մի բանի պաշտոնական ինտերնետային կայքերը, գնահատող հանձնաժողովը կարող էր հեշտությամբ ստուգել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի պնդումն առ այն, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ կողմից Հրավերի N 6.1 հավելվածով ներկայացված առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը սխալ է նշվել և չի համապատասխանում իրականությանը:

Տեղեկության համար նշենք, որ Onkron ապրանքանիշի արտադրողի պաշտոնական ինտերնետային կայքերում ներկայացված ևն հետևյալ տեղեկություններն արտադրողի անվանման վերաբերյալ.

ԱՄՆ (https://www.onkron.US/) BM GLOBAL GROUP CORP., 6428 BRENTWOOD STAIR FORT WORTH, TX 76112, USA.

Իսպանիա (https://onkron.es/)' BM GLOBAL GROUP CORP., 6428 BRENTWOOD STAIR FORT WORTH, TX 76112, USA.

ՌԴ (https://onkron.ru/) ' ООО «Онкрон Рус», РФ, г. Санкт-Петербург, улица Есенина д.1, корп.1, лит. А. пом. 73-Н. և այլն:

Որպես ապացույց, կից ներկայացնում ենք Onkron ապրանքանիշի արտադրողի ՌԴ պաշտոնական ինտերնետային կայքի առցանցխորհրդատուի ООО «Онкрон Рус» ընկերության աշխատակից Ալեկսանդրա Ֆլաումի (https://onkron.ru/c:onlent2.php'.|,url-=komanda.htm1) հետ 03.05.2019թ. №2387 (Диалог №2387) հերթական համարի տակ գրանցված կատարված առցանց նամակագրության նյութերն, որտեղ վերջինս նույնպես հաստատում է, որ ապրանքի արտադրողի անվանումն է ООО "БМ գրupп" (նշված S2387 առցանց խորհրդատուի նամակագրության նյութերի պատճենը ընդամենը /(մեկ) թերթ կցված է սույն բողոքին):

Ս.թ. մայիսի 10-ին gnumneryafa@gmail.com էլեկտրոնային փոստից մասնակիցներին է ուղարկել «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումն (Արձանագրություն №6 առ 10.05.2019թ.), որի 2-րդ կետով սահմանվել է 5 օրացուցային օրվա անգործության ժամկետ, որից հետո ընթացակարգի բոլոր առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հետ մեկտեղ «Տիգման Գրուպ» ՍՊ ընկերության սահմանված կարգով և ժամկետներում կներկայացվի պայմանագիր կնդելու առաջարկ (2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով»:

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից, գտնում ենք, որ Պատվիրատուն ուղղակիորեն և կոպիտ խախտել է 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի (Հայտերի գնահատումը) 1-ին մասի դրույթները, այն է «...Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են...»: 5-րդ մասի 2-րդ կետի դրույթները, այն է «...հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, ն հրավերով սահմանված ղեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային ն ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությանը...»: 6-րդ մասը, այն 1, «...հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները թսվարարումեն հրավերով սահմանված պահանջները:

Բացի այդ խախտվել են ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի VII բաժնի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, այն է «... սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն գբաղեցրած մասնակցի հայտը...»:

32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության դրույթները, այն է «...ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող աւագրանքի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշան և արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր)...»:

46-րդ կետի դրույթները, այն է՝ «... հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները...»:»:

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի'

- առ 08.05.2019թ.-ի N 5 արձանագրության 1-ին կետի 2-րդ մասով, այն է' «5-րդ չափաբաժնի մասով «Տիգրան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 2-րդ փուլով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին...» կայացրած որոշումը համարել անվավեր, իսկ «Տիգրան Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

- առ 10.05.2019թ.-ի N 6 արձանագրության 2-րդ կետի մասով, այն է' «Տիգրան Գրուպ» ՍՊ ընկերության սահմանված կարգով և ժամկետներում կներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ (2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով) » կայացրած որոշումը համարել անվավեր:

3. <u>«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.05.2019թ. գրությամբ դիմել է «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամին՝ հնարավորություն տալով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 13.05.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով նիստերի օրվա, ժամի և վայրի մասին չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կողմից ՎՀԳՊԱ կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.04.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից, իսկ Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 02.05.2019թ.-ի ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի քարտուղարը 26.04.2019թ.-ին www.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ կցելով հայտերի բացման նիստի արձանագրությունը, սակայն «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի փոխարեն ծանուցումը ուղարկվել է Ա/Ձ Վահե Ավետիսյանին:

Հանձնաժողովի քարտուղարը 02.05.2019թ.-ին ժամը 11:29-ին gnumneryafa@gmail.com էլ. փոստի հասցեից tigmangroup@yandex.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել հայտերի բացման նիստի արձանագրությունը:

Ընկերության կողմից 02.05.2019թ. ժամը 21:27-ին թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է 5-րդ չափաբաժնի համար նախատեսված տվյալները:

Հանձնաժողովի 06.05.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով նույնպես «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից:

Ընկերության կողմից 06.05.2019թ. թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է 2-րդ չափաբաժնի համար նախատեսված տվյալները, սակայն սխալ է նշված եղել չափաբաժնի համարը:

Հանձնաժողովի 08.05.2019թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ 5-րդ չափաբաժնի մասով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված երկրորդ փուլով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով Ընկերության կողմից երկրորդ փուլով պահանջվող փաստաթղթերը չեն համապատասխանել Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին /մասնակցի կողմից ներկայացված չափաբաժնի համարը սխալ է/:

Ընկերության կողմից 08.05.2019թ. թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է 2-րդ չափաբաժնի համար նախատեսված տվյալները:

Հանժնաժողովի 10.05.2019թ. թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով շտկված և ներկայացված փաստաթղթերը համապատասխանել են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 2-րդ և 5-րդ չափաբաժինների մաով սահմանված կարգով և ժամկետներում «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Պատվիրատուի կողմից 10.05.2019թ. www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 13.05.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված

տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում

իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի կողմից հայտարարված «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.04.2019թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընկերությունը 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարը 26.04.2019թ. www.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ կցելով միայն հայտերի բացման նիստի արձանագրությունը, իսկ 02.05.2019թ. ժամը 11:29-ին gnumneryafa@gmail.com էլ. փոստի հասցեից Ընկերության tigmangroup@yandex.ru էլ. փոստի հասցեին է ուղարկել միայն վերը նշված արձանագրությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ պարտավոր էր էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցեր առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

Սակայն, սույն գործի փաստերի համաձայն, հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով չի ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին և չի առաջարկել ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ խախտելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները,

ինչն և իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը, որպիսի պայմաններում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի կողմից «ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով բողոքով ներկայացված փաստերին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել հետևյալը.

Հանձնաժողովի 06.05.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն նույնպես ճանաչվել է առաջին տեղն զբաղեցնող մասնակից:

Ընկերության կողմից 06.05.2019թ. թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է 2-րդ չափաբաժնի համար նախատեսված տվյալները, սակայն սխալ է նշված եղել չափաբաժնի համարը:

Հանձնաժողովի 08.05.2019թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով Ընկերության կողմից երկրորդ փուլով պահանջվող փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին /մասնակցի կողմից ներկայացված չափաբաժնի համարը սխալ է/:

Ընկերության կողմից 08.05.2019թ. թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է 2-րդ չափաբաժնի համար նախատեսված տվյալները, որի համաձայն՝ որպես վերը նշված չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր առաջարկվել է գնման ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով նախատեսված՝ ամբողջությամբ նույն տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանք:

Հանժնաժողովի 10.05.2019թ. թիվ 6 արձանագրության համաձայն՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով շտկված և ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ հրավերով նախատեսվում է, որ ապրանքների գնման դեպքում մասնակիցն առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը:

Տվյալ դեպքում Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել է ապրանքի տեխնիկական

բնութագրերը, որը ամբողջությամբ համապատասխանում է Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագերին, ինչպես նաև Ընկերության կողմից նշվել է առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, որպիսի պայմաններում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 13.05.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել թիվ ՀԳՊԱ-ԳՀԱՊՁԲ-19/04 ծածկագրով գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1. 08.05.2019թ.-ի թիվ 5 արձանագրությամբ կայացված 5-րդ չափաբաժնի մասով «Տիգման գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը համապատասխան գնահատելու մասին որոշումը:

2. 10.05.2019թ.-ի թիվ 6 արձանագրությամբ կայացված 5-րդ չափաբաժնի մասով «Տիգման գրուպ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումը:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**